Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր N 1

**«Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ»-ի և «ՀՈՎՋԱՎ» ՍՊԸ-ի միջև 16.04.18թ. կնքված N ՋԳՀ-ԱՇՁԲ-2018/2/2 ծածկագրով «Ջերմուկ համայնքի Կեչուտ թաղամասի խաղահրապարակի կազմակերպման» աշխատանքների պետական գնման պայմանագրում փոփոխություն կատարելու մասին**

ք. Երևան

«17» դեկտեմբերի, 2018թ.

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ և 57-րդ կետերը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի նոյեմբերի 29-ի N 1374-Ն որոշման դրույթներով, ինչպես նաև **ՀՏԶՀ-ի և ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության միջև դրամաշնորհային պայմանագրով՝ «Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը»**, ի դեմս գործադիր տնօրեն **Աշոտ Կիրակոսյանի**, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **«ՀՈՎՋԱՎ» ՍՊԸ-ն**, ի դեմս տնօրեն **Ա. Հարությունյանի**, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, երկուսը միասին Կողմեր, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Կողմերի միջև **16.04.18թ**. կնքված **«Ջերմուկ համայնքի Կեչուտ թաղամասի խաղահրապարակի կազմակերպման»** աշխատանքների պետական գնման **ՋԳՀ-ԱՇՁԲ-2018/2/2** ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.3 կետում կատարել փոփոխություն և շարադրել հետևյալ խմբագրությամբ.

**«Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են Սույն Համաձայնագիրը ստորագրելու պահից և կատարման ժամկետը սահմանվում է՝ 105 օր»:**

2. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը և գործում է մինչև Կողմերի միջև Պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատարման ավարտը:

3. Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքները և պարտականությունները թողնվում են անփոփոխ:

4. Համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Հավելվածները հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է Համաձայնագրի մեկական օրինակ:

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՊԱԼԱՌՈՒ |
|---|---|
| Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ | «ՀՈՎՋԱՎ» ՍՊԸ |
| Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037, Կ.Ուլնեցու 31 | ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք. Ջերմուկ, Շահումյան 11 |
| ՀՎՀՀ՝00846441 | ՀՎՀՀ՝ 08909995 |
| ՀՀ՝ 1510032335590100 | ՀՀ՝ 16049004133400 |
| ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ | «ՎՏԲ Հայաստան բանկ» ՓԲԸ Ջերմուկի մասնաճյուղ |
| Գործադիր տնօրեն | Տնօրեն |
| Աշոտ Կիրակոսյան | Ա. Հարությունյան |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |

*Հավելված*
*«16» ապրիլի 2018 թ. կնքված*
*ՋԳՀ-ԱՇՋԲ-2018/2/2 ծածկագրով պայմանագրի Համաձայնագիր 1-ի*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԵՎ «ՀՈՎՋԱՎ» ՍՊԸ-Ի ՄԻՋԵՎ 16.04.2018Թ. ԿՆՔՎԱԾ N ՋԳՀ-ԱՇՋԲ-2018/2/2 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ N 2 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

| N ը/կ | Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ | Աշխատանքների կատարման ժամկետը | |
|---|---|---|---|
| | | Սկիզբը | Ավարտը |
| 1 | **«Ջերմուկ համայնքի Կեչուտ թաղամասի խաղահրապարակի կազմակերպման» աշխատանքներ** | **Սույն Համաձայնագիրը ստորագրելու պահից** | 105 օր |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | **Սույն Համաձայնագիրը ստորագրելու պահից** | 105 օր |

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
Հ/Հ՝ 900018001231
Կենտրոնական գանձապետարան
Գործադիր տնօրեն
Աշոտ Կիրակոսյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ՀՈՎՋԱՎ» ՍՊԸ
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք. Ջերմուկ,
Շահումյան 11
ՀՎՀՀ՝ 08909995
ՀՀ՝ 16049004133400
«ՎՏԲ Հայաստան բանկ» ՓԲԸ
Ջերմուկի մասնաճյուղ
Տնօրեն
Ա. Հարությունյան

/ստորագրություն/
Կ.Տ